

ամենաբարեբեր ձորն է, ուր աճում է նուռը, թուզը, մանաւանդ ձիթենին: Այս ձորի ամէն մի անկիւնը անառիկ, անմատչելի է եւ այստեղ են մեր պատմական Որջնիաղ եւ Երախանի (Էրիխանա) դեղ-բերդերը, ուր պարբերաբար ապաստանում էին բռնաւորներից փախստականները:

Ո՛չ Պալխարի, ո՛չ էլ Փետունջուրի ու Մերոյի շրջանում հայի գիւղ կայ. 1578ին ի սպառ կոտորուած են Հայերը, որոնք այս ձորն ապաստանելով՝ միշտ հալածել տանջել էին օսմանեան կառավարիչ փաշաներին եւ միւթի-ղաղիներին: Սակայն աւերակ բերդերի, ամրոցների եւ ազարակների շուրջը աւերակ տաճարները բազմաթիւ են: Այս դաւառներին Պալխար-Սամխալ միացած Համչէնի եւ Սեւ ծովի ափերի՝ Արխաւէ, Վիցէ, Արտաշէն նաւահանգիստների եւ ձորի մէջ ապրողները բոլորն էլ հայախօս (ինչպէս իրանք ասում են հայնակ) մահմետականներ են. պահպանել են տոհմական լեզուի հետ սովորոյթ-բարքերը, բայց Սամխալի եւ Պալխարի ժողովուրդը թրքախօս է:

Լեռնակառ: (Շարունակելի:)

ԱՏՐՊԵՏ



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ԽՐԱՅԵԱՆ ԿՈՒՐԵՂ, Ժողով-Կէօլծիւկ: Մարտի 1927: 80, էջ 300:

«Ծովք-Կէօլծիւկ»ը երկու մասի բաժնուած է. առաջնոյն մէջ (էջ 13—108) հեղինակը պատմական թուուցիկ ակնարկ մը կը նետէ Ծովքի վրայ: Կու տայ կարեւոր տեղեկութիւններ նորագոյն Ծովք-Կէօլծիւկի կրած վերջին փոփոխութիւններու մասին: Մասամբ անձնական հետախուզութիւններու եւ մասամբ վերապրող ծովեցիներու տուած տեղեկութիւններու վրայ յեցած՝ կը ներկայացնէ հեղինակը Ծովք-Կէօլծիւկը իր ամբողջ գիւղախումբերովը, հին աւերակներովն ու յիշատակարաններովը: Դժբախտաբար քանի մը սուղ էջեր միայն նուիրուած է ծովեցի Հայոց տարագին, ընտանեկան կեանքին ու աւանդական սովորութիւններուն, որոնց վրայ բաղձալի էր հոս ընթեռնուլ ընդարձակագոյն տեղեկատուութիւններ ու

նկարագրութիւններ, քանի որ կարեւոր ծանօթութիւններ կը պակսին: Կարելի չէ՞ արդեօք, օրինակի համար, ծովեցիներու ժողովրդական բանահիւտութիւններէն (վիճակի, պարի, վարուցանքի, կարուկուտի եւն, երգերէն) գոնէ քանի մը նմոյշ ներկայացնել: Նոյնպէս հետաքրքական պիտի ըլլար տեղական լեզուէն մէկ երկու ճաշակ ընծայուած տեսնել կա՛մ խօսակցութեան եւ կա՛մ հեքեաթի ձեւի տակ: Յետոյ հեքեաթներ, առածներ, հանելուկներ դժուար չէր թերեւս վերապրող ծովեցի մամիկներէ քաղել ու զետեղել գրքին վերջը: Գուցէ թէ Յարգ. հեղինակը երկրորդ հատորի մը վերապահած է այս կարգի նիւթերու հրատարակութիւնը, ինչ որ ցանկալի է մեզ ենթադրել: Ծովեցիներու տնտեսական կեանքի վրայ (էջ 79—94) տրուած ծանօթութիւնները չափազանց հետաքրքրական ու գոհացուցիչ են:

Գրքին Բ. մասը (էջ 109—300) կը դրողի Ծովքի Հայոց մտաւոր վերադարձնումով ու ազգային կազմակերպութեամբ: Կը խօսուի համաշխարհային պատերազմի ծագումի եւ անոր հայ ժողովուրդի եւ մասնաւորապէս ծովեցուց վրայ ըրած յոռի անդրադարձումին վրայ: Հոս մանրամասնօրէն ու ակնանտեսի գրչով կը նկարագրուին ծովեցի հայ ժողովուրդի կրած անլուր տառապանքներն ու չարչարանքները՝ նախ քան տեղահանութիւնը եւ յետոյ ամբողջական տեղահանութիւնն ու ընաճնջումը: Սուսկում կ'ազդէ մարդուն ու աչքերը կը խաւարին, երբ կը կարդայ Հայ ժողովուրդի ընաճնջումի ա՛յնքան հրէշային՝ ա՛յնքան դիւային գործադրութիւնը: Հեղինակը ինքն ալ քամած է հոգեկան ու մարմնական տառապանքի ամբողջ մրուրը: Մխիթարական կէտ մը եթէ կայ գրքին այս տխուր էջերուն մէջ՝ այն ալ պատմութիւնն է քանի մը տասնեակ ծովեցիներու վերապրումին ու դրուագը բուռ մը ծովեցի քաջելու դիւցազնական ինքնապաշտպանութեան, զոր հանդէս կը բերեն Ս. Նշան կղզւոյն վրայ (էջ 193—291):

Կը շնորհաւորենք «Ծովք-Կէօլծիւկ»ի երիտասարդ հեղինակը եւ կը մաղթենք ո՛ր ի մօտոյ լոյս հանէ Ծովքի մասին ուրիշ անդրագոյն տեղեկագրութիւններ ալ, մասնաւորապէս ուշադրութիւն դարձելով անո՛ր ազգաբնակչան նիւթերուն, որոնք, աւա՛ղ, ընդ միշտ կորստեան մատնուելու վտանգի մէջ են:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

